



ՀԱՅՈՐ 8

1892

ՀԱԿԱՑԵՄՔԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՔԵԱ-ՊԱԻՂԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱԽԴՆ
ԵՒ ԳՐ. ՆԱՐԵԿԱ.ՑԻՈՑ ԹՈՒՂԹԸ



Սկ Հ. Միք. Չամչեան, ընդհակառակն, կը մերժէ Փոտի և անոր հետեղաց այս կարծիքն, ըսելով, թէ « Այն Պօղոս՝ որ յիշի աստ, ոչ էր 'ի Հայոց, այլ յայլմէ ազգէ՝ բնակեալ յաշխարհին Փոքուն Հայոց. և զի զայն աշխարհ պատմիշքն Յունաց կոչեն Հայաստան, վասն այնորիկ թերեւս և այն Պօղոս համարեալ իցէ Հայ, նոյնպէս և որդիքն » : Բազմահմտւ Հ. Մ. Չամչեանի մէջ թերած հերքողական պատասխանին՝ ենթադրական իսկ համարելով, սակայն և այնպէս թէ Գենեսիփոս և թէ Թէոդորոս յունահնչիւն անուանվը կարող են անոր կոռուան լինել. բայց Փոտի կարծիքը՝ պատմական հիմ մ'ես ունենալու է անպատճառ, և աւելի ծանրակշիռ։ Այս պատմական հիմն՝ կամ Յունաց առ Հայս ունեցած յայնժամն ատելութեանը պարզապէս արդիւնք համարելի է, որով կը ջանային յարմար պարզայից մէջ ամբաստանել զհայս. և կամ իրաք Պօղոս անունով Հայ-

ազգի⁽¹⁾ Մանկեցի մալ եղած է ի դարու երկրորդ կէսին, որ
կալինիկեայ որդւոյն Պօղոս Սամոստացւոյն արդէն սկսած գործին
յսոյ ուրեմն զարգացուցիչ և տարածիչ ըլլայ Հայոց մէջ։ Արդ՝
եթէ փոտ ժամննակագրական կարգաւ ըրած է Նոր Մանկեցւոց
պատմութիւնն, այն ատեն երկրորդ ենթագրութիւնն աւելի ճշմար-
տանման կ'երկի ինձ։ և վստահանալով փոտի երկրորդ տեղւոյն վե-
րայ կը համարձակիմ մանաւանդ ըսել, թէ հաւանական է որ այս
հայազգի կոչուած Պօղոսը՝ կալինիկեայ որդւոյն Պօղոսի որդին
եղած ըլլայ, և թէ նա հայ կարող էր լինել 'ի հօրէ և ոչ 'ի մօ-
րէ։ Նա իր հօրը անմիջապէս չէր կարող յաջորդել, այլ իր հօր
յաջորդին։ Յիշաւէ, մեր այս կարծեաց 'ի նպաստ՝ դիտելու ենք
նախ, որ Պետրոսի Սիկիլիացւոյն, ինչպէս և փոտի առաջին տեղ-
ւոյն մէջ, ֆանարիսա կը յիշուի իբրև ժողովասեղի Պօղոսի, իսկ
երկրորդ տեղւոյն մէջ՝ Եպիսապարիսը։ Արդ Եպիսապարիսն՝ եթէ
ֆանարիսի նոր անուանակոչութիւն մի համարինք, և եթէ ան-
կէց բոլորովին տարբեր տեղ մի, հետեւնել կու տայ նոյնպէս
տարբերութիւն անձի և ժամանակի։ Բ. Դիտելու ենք, որ Փոտ
Պօղոսի Սամոստացւոյն յաջորդել կու տայ զեռատանտինոս, և
անկէ վերջ կը գնէ զհայազգին Պօղոս, զոր Յոյնք կը կարծէին
իբրև նախկին պետ Պաւղիկեանց։ Գ. Յոյն մատենագրաց քով
Պաւղիկեան ազանդն ի սկզբան Պաւլօաննաւ = Պատղ-Յովհաննան
կը կոչուէր՝ Սամոստացի զոյգ հարազատներու անուամբ. բայց
վերջէն Պաւլօաննաւ — Պատղիկեանքի փոխեցաւ։

Բայց դիտելով մէկ կողմէն, որ Պետրոս Սիկիլիացին՝ կոստանտինոս աղանդապետին երևումը կը գնէ յամի Տեառն 653. և այնպիսի պարագաներով^(*) կը ներկայացնէ զնա, որոնք կար-

1. Հայերէն և Գիրք ՃՆԾ Հերձուած ոցի մէջ կը գտնենք այս նկատմամբ հետեւ եալ հետաքրքրաւարժ տեղէկութիւնը. « Ազա կին մի Շէրի անուն այնր (այսինքն է Քաղերդական կամ Պօլիկենաց) աղանդոյն ելեալ զինի Թուրքացն՝ եկն՝ ի Հայս, և Պօշ ոմն յԱյրարատեայ զաւառէն՝ որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առեւ անկեաց զինն, և խառնակցաւ աղանդն ընդ քրիստոնէութեան։ Զարեգակն զգիրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ. և վասն այսորիկ ծումանան՝ ի կիւրակէի։ Եւ եկեալ սուրբն Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն, և անէծ զնա և զնաց ։ Այրէ՝ կամ այս Եփրեմս Խորին Ասորիէն տարրեր մէկն է, և կամ Քաղերդական աղանդը Դու դարուն իսկ կար։ Բայց ինձ առաջինն աւելի հաւանական կը թուի, և կը յուռամ յետոյ այս կէտո յուսաբանե։

2. Զի կ'աւանդէ, թէ այս ժամանակիս Մանիքեցի փախստական սարկաւագ մի՝ Ասորիկէն գալով՝ ի Հայս, իր հայրենիքն՝ ի Մանանալի, հիւրընկալութիւն գտաւ Կոստանտինոսէն, որուն՝ ի փոխարէն երկու գրուածք ընդացեց, մինը՝ Մանիքեցւոց Աւետարան, իսկ միւսը Պօղոսի Ալաւդ. թղթերը, անշուշտ խեղաքթիւրուած. և թէ այդ օրէն՝ ի վեր Կոստանտինոս խորհեցաւ հիմնել զվարդապետութիւն Պաղիկեանց:

ծել կու տան, թէ նա ինքն եղած ըլլայ նախապետ այն աղանդին, և ոչ Պօղոս ոք. իսկ միւս կողմէն ալ նոր Մանկբէութեան հինաւուրց անուանակոչութիւնը՝ Պաշղիկէուրիւն կ'ելլեն մեզ ընդ առաջ իրբե նորանոր գժուարութեան ժայռեր, զոր առանց հարթելու՝ կարելի չէ յառաջ վարել զպատճութիւն. Ուստի ես իրօք հարկ կը զգամ այս մասին մի նոր կարծիք ևս արտայայտել աստ, որով կը յուսամ թէ ոչ միայն այս գժուարութիւնքս պիտի հարթին, այլ նոյն իսկ Պօղոսի Սամնուատցւոյ և հայազգի Պօղոսի մասին եղած աւանդութիւնքն ևս իրենց բանաւոր լուծումը պիտի ընդունին. Արդ՝ իմ կարծիքովս նոր Մանկբէութիւնը յէ գարուն Պաւղիկեան կոչուած է ոչ թէ Սամնուատցւոյն կամ հայազգի Պօղոսի մ'անուամբ, այլ նոյն ինքն հեթանոսաց Առաքելոյն Պօղոսի անունով, զոր կամ մի ոմն 'ի նոր Մանկբէցւոց, և կամ անոնց ընդհանուր համայնքը ուզեց իրեն կամ իրենց աղանդին յատկացնել. Մեր այս կարծեաց 'ի հաստատութիւն կան այնպիսի պատմական և շշափելի ապացոյցներ, որոնց առջև գրէթէ ամէն տարակոյս կը փարատի:

Նախ 'ի պատմութենէ գիտենք, թէ ինչպէս Մանկբէցիք՝ այսպէս ալ Պաւղիկեանք զիրենք Տարսոնացւոյն իրբե ճշմարիտ աշակերտաներ կ'անուանէին, կարծելով թէ ունին բոլոր անոր գիտութիւնն և իմաստութիւնը. և անոր վկայութիւնը Ս. Գրքէն վեր կը գնէին. Բ. Դիտելու ենք, որ Պաւղիկեանք կը նզովէին թէ զՄանի և թէ զՊօղոս Սամնուատցին. Արդ՝ այս բանս անհասկնալի պիտի մնայր, եթէ նորա պարզապէս Մանէսի գծած սահմանին մէջ մնացած և հնացած ըլլային, և կամ զՊօղոս Սամնուատի ճանճային իրենց իրբե նախահայր. Գ. Դիտելու ենք որ Պաւղիկեցի մեզ ծանօթ աղանդապետներէն իւրաքանչիւրը՝ Պօղոս Առաքելոյ այս ինչ կամ այն աշակերտի անունը կը ստունձնէր, և իբրև անոր կենդանի անձնաւորութիւն՝ այնպէս կը ներկայանայր ժողովրդոց՝ զանոնք որսալու համար. Եւ ստուգիւ կոստանտինոսը՝ Սիղուանոս կը կոչէր ինքզինքը; Սիմէոնը՝ Տիտոս, Գենեսիոսը՝ Տիգրենոս, Արքոնէոսը՝ Եպափրոդիտէս և Սարգիսը՝ Տիգրիկոս. Այսպէս ալ իրենց մոլորութիւնները սերմանած տեղերը՝ Պօղոս Առաքելոյ աշակերտաց առաքելութեան տեղերու պիտակ անուամբք կ'անուանէին. Օրինակի աղագաւ, Մակեդոնիա կ'անուանէին զկիրոսսա, Աքայիա՝ զՄանանաղի, Կողոսացիս՝ զԱրգոնաւտս, Եփեսացիս՝ զՄոփսուեստացիս, Լառոդիկեցիս՝ զկիրնեցիս կամ զգաւառն կանիս. Արդ՝ ուշի ուշով դիտելու ենք, որ հօս Պօղոս Առաքելոյ անունն և Առաքելութեան թեմ մի յիշուած չէ. Ուրեմն ասկէ կը հետեւ, թէ կամ

կոստանտինոսի նախորդ աղանդապետն, — որուն ազգն և անունը դեռ խորհրդական քօղով ծածկուած կը մնայ, — նա ինքն կը կրէր առաքելապետին անունը, և կամ լաւ ևս, կոստանտին նոսէն հիմնուած աղանդը, ուսկից յառաջ եկաւ Պաւղիկէութիւն, այսինքն է Պաշտոսականուրիւնն. Դ. Դիտելու ենք, որ հնագոյն աղբերը առհասարակ փոքր 'ի շատէ նշանակած են մեզ յիշեալ աղանդապետներու իւրաքանչիւրին բոնած ուղղութիւնը, կատարած գործն և ունեցած ահաւոր կատարածը. և այս իսկ պատմական և անձնական որոշ պարագաներով: իսկ կալինիկեայ որդուցն վարդապետութեանը, գործերուն և մահուանը վերայ որոշ տեղեկութիւնք կը պակին: Եւ այս իսկ ապացոյց մ'է, թէ նա գուցէ թէ պատմական անձնաւորութիւն մ' իսկ եղած շրջայ. այլ շիոթութիւն ինչ հինաւուրց Պօղոսի Սամոստացւոյ՝ որ 262 վրկական թուին: եղաւ եպիսկոպոս Անտիռքայ, մոլորեցաւ և ցանեց զնախասերմունս Պաւղիկեան մոլորութեանց: Այսպէս և կալինիկէ անունը՝ փոխառութիւն մ'է հաւանօրէն սրբուհւոյն կալինիկեայ, զոր Մանիքեցի կին մի իրեն սեփհականած էր: Ուրեմն իրաց այսպիսի խրժնացեալ վիճակի մէջ տրամաբանական չէ պնդելը, թէ Պաւղիկեան աղանդը՝ հայ հանճարոյ գիւտէ, թէև իրօք հայ հողին վերայ աւելի խոր արմատ ձգած և ընդարձակ շառաւիզներ տարածած ալ համարինք:

Պաւղիկէութեան ծագումն և անուանակոչութիւնն այսպէս ստուգաբաններէն վերջ, այժմ տեսնենք, թէ ի՞նչ աղերս ունի այն Մանիքեցւոց վարդապետութեան հետ, և կամ ի՞նչ կէտերով կը տարբերի անկէ:

Արդ՝ Պաւղիկեանց վերայ երկասիրող հին և նոր աղբիւրներն ուշագրութեամբ քններով, կը տեսնենք, որ տեսականին մէջ դարձեալ երկու, այսինքն է չար և բարի սկզբանց վարդապետութիւնն է, որուն վերայ իրբեք յառանցքի կը դաշնան բիւրապդի մոլորութիւններ: իսկ գործնականին մէջ՝ մի և նոյն կեղծաւոր միջոցները՝ գեռ աւելի կատարելագործուած ըստ բերման ժամանակին և պարագայից: կոստանտինոս, — որուն կ'ընծայեն Պետրոս Սիկիլիացին և Փոս՝ Պաւղիկեան գրութեան կամ աղանդի կազմակերպութիւնը, — աեսնելով, որ Մանիքէութիւնը՝ իւր մի քանի աշքի զարնող հեթանոսական և առասպելապատում իրաց համար խիստ ընդդիմութիւն կը կրէր, և թէ անոր հետեղաց բաժինն էր չարատանջ և անարդական մահը միայն, ուստի խորհեցաւ թօթափել և մաքրել զայնս. իսկ մնացածները՝ քրիստոնէական՝ բայց ոչ քրիստոնէավայել վարդապետարանի մի մէջ փոխադրել: Պարագաներն ևս օգնեցին. այսինքն է Ասորի-

քէն իր հայրենիքը վերադարձող Սարկաւագը, զոր այլուր յիշցինք, տուաւ անոր Էնացցէլու և Առօտօնօքը: Կոստանտինոս կարդաց, իմացաւ անոնց պարունակութիւնն և լրեց, հետամուտ լիներով յօրինման իւր ծրագրին: Այս խորհրդաւոր գրութիւնքս կրկին ուրուագիրներու կը նմանէին, որոնց շիտակ կողմը՝ քրիստոնէից կը ներկայացնէին, անոնց պատուհաններէն ազատուելու համար. իսկ իրենք իրենց մէջ բոլորովին յեղացրջուած կը հաւկընային և կը մեկնէին զանոնք: Այսպէս ուրեմն մէկ կողմէն այս երկու գրուածքս աշաց առջև ուներով կոստանտինոս, միւս կողմէն ալ ժամանակի պահանջը, այսպէս կազմեց իր նոր հաւատապատումը. այսինքն է առ երեսս կեղծաւորելով՝ մէկդի թողուց վաղենտինեայ երեսուն էակաց և աստուածոց առասպելաբարանութիւնքը Տերաւոլոցիաց շան տրակուու Անջան ու Յեջ, զոր Մանի ընդունած էր իր ընտրական գրութեան մէջ, կամ յաւ ևս 'ի չամադանդարանին: Թողուց կուբրիկուէն հնարուած անձրեկի զըգւելի առասպելը, որ Պետրոս Սիկիլիացւոյ և փոտի աւանդածին նայելով, իբր թէ փախչող կուսին զկնի ընթացող գեղանի պատաննեկին փրփրերախ քրտինքէն յառաջ կու գար և մոգական զօրութիւն ունէր: Ասոր նման գեռ ուրիշ անհաւատալի բաներ ևս 'ի բաց թողուց: իսկ Բասիլիդէսի շամբուշ անառակութիւններէն չկարենալով հրաժարիլ և հրաժարեցնել իրենները, հնարիմացութեամբ մի հրապուրիչ քողի տակ ծածկեց զանոնք, աւելցըներով անոնց վերայ ամէն տեսակ մծզնէութիւն:

իր այս գրութիւնը՝ Պօղոս⁽⁴⁾ Ասպեկալէն ընդունած կը համբաւէր, և զինքը Սիկուանոս կ'անուանէր: Թուղթեր ևս կը գրէր առ կիրօսաացիս՝ Մակեդոնացիս անուանելով զանոնք: Մ. Գրոց ամէն իմաստները փոխեց, և իր այն վարդապետարանով՝ հազար և մի նոր մնուրութեանց գուռ բացաւ: իր գրութիւնէն դուրս եղած ո՛ր և է գրուածք մերժեց և դատապարտեց, և իբր օրէնսդիր և հիմնադիր քսան և եօթն տարիներու կարճ շրջանին մէջ գրէթէ ամէն կողմ ծաւալեց անլուր մնուրութեանց հետ նաև անբարոյականութիւնը. և այնքան մեծ ազգեցութիւն ունեցաւ իր հեաւողաց վերայ, որ զինքը միայն Աստուծոյ տեղ պաշտելու համար՝ նզովեցին և զՄանի՝ այլովքն հանդերձ:

Այս նոր Մանիքեցիներու բանած ցածոդի և կեղծաւոր ընթացքին վերայ գեռ աւելի որոշ գաղափար մի տարու համար, յիշենք կոստանտինոսի յաջորդներէն մլոյն, այն է Գենեսիոսի 1 Վերը արտայացտած մեր կարծիքը Պաւղիկէռթեան անուանակշութեան նկատմամբ, այս տեղուովս կրկին ևս կը հաստատուի:

արարքը. Սա յամին 747-744 երբ լէոն կայսեր հրամանաւը կալանաւորուած բերուեցաւ ՚ի կ. Պոլիս, և Պատրիարքին կողմէն հարցաքննութեան ենթարկուեցաւ, թէ ինչո՞ւ բաժնուած էր ուղղափառ եկեղեցիէն, պատասխանեց, թէ ինքը մոքէն իսկ այնպէս բան անցուցած չէր բնաւ. որովհետեւ ուղղափառ եկեղեցւոյ անուամբ Պաւղիկեան համայնքը կը հասկնար միայն երկրորդ անգամ երբ հարցաւ, թէ ինչո՞ւ համար կը մերժէ Ա. Կուսին պաշտօնը. նենդութեամբ նզովեց զայն, որ Աստուածամօր պարտուպատշաճ յարգանքը կը զլանայ. բայց նա ինքն Աստուածամայր ըսելով երկինքը կամ վերինն երուսաղէմը կը հասկնար: Այսպէս կը վարուէին մնացած բոլոր հաւատոյ մասնցը նկատմամբ. այնպէս որ ինչ որ ըսուեցաւ աստ կոստանտինոսի և Գենեւեիոսի համար՝ նոյնը կ'ընէին բոլոր Պաւղիկեան ները. և անոնց ամենուն նշանաբանն էր կեղծառորդին, իսրեւորին և վասուորին: Ասկէ կրնան մեր ընթերցողք տեսնել, թէ մոլորութեան և պղծութեան այս արքանեակները՝ ոչ միայն բոլորովին զուրկ էին նախնի դարուց և Աւետարանի դիւցազուններէն, որոց նշանաբանն էր ընդ հակաասկն տէրունեան Այոն՝ այոն, և ոչն ոչ. և արձակ համարձակ կը խոստովանէին բըռնաւորաց, սրոյ և հրոյ առջև իրենց սուրբ հաւատքն և ներքին համոզումը, քաջութեամբ տանելով աքսորանաց, տանջանաց և մահուան, — այլ նոյն իսկ մեր դարու ո՛ր և է պատիւ և սկըզբունք ունեցող մարդէ մի: Ռւստի ուրացող կոչուելու միայն արժանի են անոնք. և ուրացողք ոչ միայն քրիստոնէական ծշմարիտ հաւատքին, այլ նոյն իսկ իրենց դաւանած դենին:

Արդ՝ մենք այս պատմական ամենաստոյգ եղելութիւնքս և տեղեկութիւնք ՚ի նկատի ունելով, մեծապէս կը զարմանանք այն գրողներուն վերայ, ոյք չգիտեմ, թէ ինչ նպատակներով կը գրուատեն և կը բաղդատեն անոնց քաջութիւնը՝ նախնի քրիստոնէից անտեղիստալի և անբաղդատելի քաջութեան և հաստատամբ տութեան հետ, հիմն ՚ի վեր տապալելով պատմական իրողութիւնները:

Մէջ բերենք այժմ այս նոր Մանիքեցւոց վարդապետութեան գլխաւոր կէտերն և հիներէն ունեցած տարբերութիւնքը:

Կոստանտինոս՝ Մանիքութեան հիմանը վերայ ուղելով բարձրացընել իր վարդապետութեան նոր շէնքը՝ դրաւ անոր իբրև անկիւնակալ, Ա. կերպապէս ընդդիմագրութիւն մ'ընդ մէջ բարի Աստուծոյ, — ծէր երկինից անուանելով զնա, և աստուծոյն չարի, — կոչելով զատ Զօրուրին կամ Արարող Ճյամօսրցօն աշխարհի:

ԱՐԴ՝ Պաւղիկեան դրութեան այս գլխաւոր սկզբունքէս ակներկ կը տեսնուի, թէ ազա ո՞րքան հեռացել էին հին Մանկքեցիներէն. վասն զի Մանկքէութեան մէջ, — ինչպէս տեսանք, — հոգին կենդանի՝ նկատուած էր իբրև բարեմոյն էակ մի. մինչդեռ ասու՝ աշխարհքիս ստեղծագործութիւնը չար հոգւոյ մի կ'ընծայուի: Եւ այս տեսական փոփոխութիւնս դիտմամբ ըրին, որպէս զի ՚ի գործնականին անխղճաբար անձնատուր ըլլան ՚ի չարն և յախտաւոր յօժարութիւնս բնութեան:

Բ. Մարդու մէջ գտնուած ո՞ր և է բարեմասնութիւն՝ բարի Աստուծոյն կը վերագրէին. իսկ յոռեմասնութիւնքը, այսինքն է ստորին մասը, զգայականութիւնն և նիւթականը՝ աստուծոյ չարի: Դէմիուրգուը՝ ստեղծած է զմարմին. իսկ Աստուած ստեղծած է զհոգին: Սա կը ջանայ ձգել զմարդիկ ՚ի բարին. իսկ նա խոտորեցնել ՚ի չար անդր: Գ. կ'ընդունէին մարդկութեան անկեալ վիճակը, բայց այնու իսկ երջանիկ կը համարէին զմարդ, ըսելով, թէ բարի Աստուածը՝ այն առթիւ ՚ի գութ շարժեցաւ մեծագոյն ևս բարիքներ ընելու մարդկութեան: Դ. կ'ընդունէին երրորդութեան գոյութիւնը, բայց գնոստիկեան մոռք փոքրկացնելով զՈրդի և զՀոգի: Ե. Քրիստոս իր մարմինը յերկնից բերաւ յերկիր, չկարենալով յերկրէս առնուլ զայն՝ առանց ապականելու. վասն զի երկիրը՝ Դէմիուրգուին դործ է: Հետևաբար կուսէն չծնաւ նա, այլ իբրև խորվակէ մ'անցաւ անոր միջէն, յաշխարհ մոնելու համար: Զ. Ոչ թէ Մարիամ կոյսն, այլ երկինքը կամ վերինն երուսալէմ է Քրիստոսի մայրը: Է. Մարիամ՝ Յիսուսէն վերջ դեռ ուրիշ որդիներ ալ ունեցաւ: Ը. կը մերժէին ուղափառ եկեղեցւոյ ամէն պաշտամունքն և արտաքին արարողութիւնները: Թ. Մկրտութիւնն և ընթրիքը կը կատարէին՝ առանց զգալի նիւթոց, այլ պարզապէս բանիւ և ձեռով. որովհետև ըստ Պաւղիկեանց՝ Մկրտութիւնն ուրիշ բան չէր, բայց եթէ Քրիստոսի այն վարդապետութեանը, թէ « Ես եմ ջուրն կենդանի »: Այսպէս և ընթրիքը՝ պարզապէս նշանակ է Քրիստոսի այն վարդապետութեանը, թէ « Ես եմ հացն կենաց »: Ժ. կը մերժէին սրբոց բարեխօսութիւնն և անոնց ընծայուած յարգութիւնը. որովհետեւ, կ'ըսէին, սաւրբերը ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ՝ Դէմիուրգուի ծառաները, որոնք դատաստանին օրը բարի Աստուծոյ երեսէն պիտի ձգուին: ԺԱ. կ'արհամարհէին Քրիստոսի սուրբ խաչն՝ իբրև փայտ չոր և զուրկ աստուածային զօրութենէ: ԺԲ. եկեղեցւոյ նուիրապետութիւնը (⁴) բացէ ՚ի բաց կը մերժէին:

1. Իրենց զլիաւորներն յառաջագոյն կը կոշուէին վարդապետք, որոնց ապա

ԺԳ. Հին կտակարանը բոլորովին մերժուած էր անոնցմէ . իսկ նորէն՝ Պօղոսի թղթերն և Ղուկասու Աւետարանը միայն կ'ընդունէին , որովհետև սա Պօղոսի աշակերտուած էր , կ'ըսէին : ԺԴ. Ս. Պետրոսի առ կաթուղիկեայս գրուած թղթերու հետ՝ անձն ևս կը դատապարտէին . վասն զի , կ'ըսէին , զՔրիստոս ուրացաւնա , և Հրէից , — զորս իրենք մեծապէս կ'ատէին , — շատ առանձնաշնորհութիւններ տուաւ :

Այս գլխաւոր և արմատական մոլորութիւններէն յառաջ կուգային ապա ուրիշ անթիւ զառածմունք՝ ի գործնականին : Կը ցաւինք որ Պետրոս Անկիլիացին և Փոտ Պաւղիկեանց պատմական մանրամանութեանցը զբաղելով , — յայնծամու սովորութեան համեմատ , — զանց ըրած են մէջ բերելու բոլոր անոնց կրօնական և բարոյական դրութիւնը՝ քննաբանորէն : Սակայն յոյժ չնորհապարտ ենք մնր թովհ . Օձնեցի հայրապետին , որ անոնց պակասը՝ գէթ մասամբ մի լեցուցեր է : Այո՛ , նա կը վկայէ , թէ Պաւղիկեանք , ոյք զիսաչապայտ քրիստոնեայս՝ իբրև կուապաշտս կը ծաղրէին և կը ծանակէին , իրենք , ընդհակառակն , չարեաց 'ի չարիս վերացցեալ ելին . այսինքն է Պատոկերամարտուրքենէ 'ի խաղամարտուրքիւն և 'ի քրիստուաստեցուրքիւն , և անկէց դիւապաշտուրքեան և անաստուածուրքեան անդնդոց մէջ գահավիժեցան : Եգիպտացւոց հետ մկնորսակ կենդանեաց պատիւ և պաշտօն կը մասառցանէին : Յանէսի և Յամրէսի հետ Ոլիմպոսի կայծակնահանու և փրփրերախ դիւին դիմաց երկիր կը պազանէին : Զքագաշտ մոդին հետ արեգակն և լուսինը կը պաշտէին , և յափսիթեր անոր առջև ինկած ողբաձայն կ'աղաղակէին . « Արեկի , Լուսիկ » : Մանէսի և Սիմոն մոգի հետ կախարդութիւն կ'ընէին , իրենց օգնութեան կանչելով օդային և վերնոտ գեերը : Ափրոդիտական կրքերն աստուածացուցին , անոնց մէջ գընելով իրենց երշանկութիւնը : Բնութեան և կրօնից դրած պատուարն որով միայն մարդկային բարոյականը կը պահպանուի , վերջին աստիճան անամօթութեամբ քակեցին : Անոնց համար չկար խտիր մօր և որդւոյ , հօր և դստեր , եղբօր և քեռ մէջ : Պղաստոնէն երևակայեալ նորահնար Հասարակապետութիւնը՝ Պաւղիկեան համայնքի մէջ իրականութիւն դարձած էր , մասնաւրապէս վաւաշոտ և չնակեաց վահանի ձեռքով , զոր կը նկարագրեն քաջ Փոտ և Պետրոս Անկիլիացի : Մայրապական փոխանակեցին սոնէնդուուր ընկերք , մի և նոյն իշխանութեամբ : Այս վերջնոցս օդ-նականները Նոտարք յօտարօւ կը յորդուէին , որոց գործն էր՝ Ս. Գրոց ընտիր ընդօրինակութիւններ ընել : Տուներն՝ որոնց մէջ կը համախմբաւէին՝ ոչ թէ Եկեղեցի ձռնալուուր , այլ որօսուչու աղօթատեղի կ'անուանէին :

նութեան և քոյրառեանդութեան խոհերու մէջ շաղախուած՝ իր-
բ Քաղեայ և Աստարդեայ գարշկեաց՝ ստրկաբար կը ծա-
ռայէին անոնց։ Այնպէս որ սուրբ Հայրապետիս վկայութեանը
վերայ յեցած, կրնանք ըսել, թէ Մանանաղի, կրբոսսա և Զըր-
կայ կամ Զըրիկ՝ իրբ մի մի Սոդոմ Գոմորներ էին՝ անառա-
կութեան ախտերով ողողուած։ և ամէն տղմասէր մարդ կը փու-
թայր ընկենուզ ինքինքն այն հեղեղին մէջ։ Ահաւասիկ անոր
խօսքերը. « Նախկին մձնէութեան պայղակենութեան խեցե-
րանք . տղմասէր և ժանատգործք. ընդ խաւար զխաւարայինան
կատարելով ծանակութիւնն, առ միմեանս անպատկառացոյցք են
պղծութեան. 'ի մէնջ վրիպանուն պատրողաբանութեամբ զան-
խանալ կարծեն։ Ոչ գիտեն՝ թէ ո՞րպէս հոտոցն անկարածած-
կելիք են, ընքեամբ առ հոտոտելիսն բերեալ բուրմոնք. սոյնպէս
և վասն գործոցն հողմով համբաւուցն զյորվից բախել զեկու-
ցանէ լսելիս։ Այլ սակայն և գժուարագիտելի է յոքնադան և
բազմախուռն 'ի նոսա անտառացեալ չարութիւնն . . Վերջէն կը
նկարագրէ անոնց Փիզիքական կացութիւնն այսպէս։ « Տիսա-
նեմք 'ի ծառայութիւն զեկեալսն սատանայի՛ խեղանդամն և հո-
գեհաշմն, ծիւրեալս և կասեալս 'ի զօրութենէ » .

ի պոռնկութենէ ծնուած ստնդեայ մանկունքը՝ հաւերու և
ոչխարներու նման փողոտելով, ալիւրի հետ կը զանգէին, և պըժ-
գալի արարողութիւններով (1) հանգոյն շաղզակեր խողերու ի-
րենց ծնունդը կ'ուտէին։ Անոնց ցամաքեալ դիակունքն և կմախ-
քը՝ բարձրահայեաց տանիքներու վրայ գիզելով՝ իրենք ալ վա-
րէն դէպ 'ի վեր նայելով՝ կ'երգնուին անոնց վրայ, ըսելով.
« Բարձրեալն գիտէ » : իրենց քահանաները՝ կանանցմէ կ'ընտ-
րէին իրբ կուբնատիլայ, Պրիսկիլայ և Մաքսիմիլայի յաջորդ-
ներ. և Մոնդանոսի նման իրենք զիրենք չողի սուրբ կ'անուա-
նէին (2), և այն լպիրջ կանանց ձեռքով մարգարէութիւններ և
պատգամներ կու տային։ իսկ այսպիսի մարգարէուհիններ ընտ-
րելու համար՝ զարհուրելի և անլուր ոճիր մ'ալ հօն կը գոր-
ծէին. այսինքն է, կանայքը բոլորաձե կը բազմէին, և անոնց

1. Այսինքն է, հաց շնելով՝ ըստ վկայութեան հայերէն « Հերձուածոց Գրքին »,
կը բաշիէին իրենց համայնքին՝ իրբ հաղորդութիւն պատարագաց կամ Աղապաց,
և կը շամրէին մոլեգնեալք։

2. Զուարճաղի է Փոտի և Պ. Սիկիլացւոյ աւանդածը Գենեսիսի երկու որդ-
ւոցը Զաքարիայ և Յովելիայ մասին, ոյք իրենց հօր մահուանէն վերը երկու կու-
սակցութեան բաժնուածան. վասն զի երեցը կ'ըսէր, թէ ինքը իր հօրմէն ժառանգած
էր զշոգին սուրբ. իսկ կրսերը կը պատասխանէր, թէ ինքն ալ ուղղակի երկնքէն
ընդունած էր զայն։

մէջ առաջնածին եղողին երեխան առնելով՝ ձերբաձգութեամբ իրարու կը նետէին, մինչեւ որ այն խեղճուկն ըլլար չարամահ. և որու ձեռքին մէջ որ ոգեսպառ ըլլարով կը մեռնէր, զնա կը կարգէին իրենց աղանդապետ և կը պատուէին: Անոր անուամբ երդումներ կ'ընէին, ըսելով. « Վկայ ունիմ քեզ անոր փառքը՝ որուն ձեռքը մեռաւ միածին որդի » , և այն: Այս խըժդժութիւնս կամ Պեղուզացւոց աղանդէն փոխ առնուած է, — վասն զի թէ՛ Ս. Եպիփանի քով և թէ՛ Հայերէն Հերձուածոց Գրքին (¹) մէջ, ինչպէս գիտեցինք, անոնց ընծայուած է. ոյք անլուր Հայութեամբ կը յաւելուին և զայս, թէ Ցիտոդէ կամ Պրիսկիլլա յշացած և ծնած էր զբրիստոս, և իդական սեռիւ եղած կ'առասպելաբանէին զնա, — և կամ Յովէ. Օձնեցին սխալմամբ Պաւղիկեանց վերագրած է զայն:

Ահա այս և ասոնց նման ուրիշ շատ և շատ քաղաքական ոճիրներ և բարոյականի և մարդկային արժանապատութեան դէմ գործուած ամպարշտութիւնք՝ արդէն բաւական էին քրիստոնեայ ազգաց և տէրութեանց ատելութեան հետ՝ աշալութիւն կուղութիւնն իսկ Պաւղիկեանց վերայ դարձնել. վասն զի այս աղանդաւորքս իրենց կեդրոնատեղիներէն գուրս ելլելով՝ ուր որ ոտք կը կոխէին, մարախի և խորչակի նման ամէն վարք ու բարք կ'ապականէին. մանաւանդ երբ Նիկեփոր խուժադուժ կայարէն ալ օդնութիւն և պաշտպանութիւն գտան: Պաւղիկեանց այս ապականիշ ընթացքը տեսնելով հայազգի կայսրն Լէոն, հարցաքննութեան ատեան մի բացաւ անոնց դէմ փութանակի, յանձնելով զայն Նեռ-կեսարիոյ եպիփառուին թովմասի և Պա-

1. Ուր ՃՄԳ. երորդ աղանդին փրսյ, որ Քահերբական, այսինքն է արիւնարբուաց թարգմանած է, հետևեալ նորութիւնը կը պատօնի ՚ի հաստատութիւն ըստած՝ նոււ. « Թագաւոր ուն Յունաց աշխարհէն պատահեաց պիղծ աղանդին Պօլիկեանց և ոչ կարաց գարձուցանել զնոսա յաղանդէն իրեանց, հալածեաց զնոսա անդր քան զիհառն կովկաս Եւ կին մի առաջնորդէր նոցա, Մարք անուն, կախարդ և կունդ: Զարագործացն բարի առնէր, և բարեգործացն պատուհաս. և զկանայ՝ հասարակաց ուսուցաննէր, և աւուրս Եւ որոշեալ, — զոր մեք հասարակաց կոշեմք, — զայն սատանայականս անուանէր, և ՚ի նոսա հեղուլ արիւն մարդոյ՝ բարի ասէր. և որ ուտէ և ըմպէ զարիւն մարդոյ՝ այն արդարութիւն: Եւ յադդմանէ սատանայի տեսիլ տեսանէր և մանկունս փողոտէր և ասէր, թէ նոցա հոգին զան ՚ի տեսիլ կախարդաց »: Կրկին արժէք ունի մեզ համար այս տեղիս, նաին զի համաձայն Յանեցոյն Պաւղիկեանց կ'ընծայէ վերոյիշեալ խժդժութիւնը, Բ. կը ցուցնէ թէ Կովկասու լերանցամիջն իսկ տարածուած էր Պաւղիկեան մալրութիւնը, որը ուրիշ ազգային և ստար մատենազիրք լուած են: Հաւանօրէն Պրիգուններու, Մայականներու և Դոփորուններու մէջ հնացած մի քանի մոլորութիւնքը՝ Պաւղիկեաններէն մնացած ըլլան:

րակոնդակէսի՝ կառավարչին փոքրուն Հայոց։ Պաւղիկեանք՝ որ այս ժամանակներս արդէն երկու գիմամարտ կուսակցութեանց բաժնուած էին, այսինքն են կիշնոխորհութ(1) և Յաստատք(2)։ ուխտ ըրին իրարու հետ՝ սպաննել զհարցաքննողս։ Իրենց այս դաւագիր որոշումն 'ի գործ դնելէ յետոյ՝ շուտով փախան 'ի Մելիստինէ, որ է քաղաք Երկրորդ Հայոց։ Հօն ընդունելութիւն գտան Սարակինոսաց ամիրակետէն, զոր օտար աղբելք Մոնեռքերատէն կ'անուաննեն, որ փոքրիկ աւան մ'ալ, Արգաս, առւանոնց 'ի բնակութիւն։ Տարիներով անդադար դուրս գալով՝ յարձակումներ կ'ընէին բիւզանդական կայսերութեան սահմաններուն վերայ. կ'աւերէին, կը սպաննէին և գերեվարութեամբ յետս կը դառնային։

Այս բանս մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ Պաւղիկեան ահաւոր աղանդապեսին Սարգսի մահը տեսնելով Մէքայէլ գ. կայսեր խնամակալ դշխոյն թէողորա, վճռեց վերջնակապէս զանոնք բնաջինջ ընել։ Յամի Տեառն 835 Պաւղիկեանք սարսափելի հալածանքի մ'ենթարկուեցան, որ կարծես թէ հեթանոսաց անողորմ ժամանակները կը յիշեցնէ մեզ։ Կ'աւանդուի թէ հարիւր հազար Պաւղիկեանք, միայն Փոքր Ասիոյ մէջ, հրոյ և սրոյ զոհ եղան, և վերոյիշեալ կնկան սուրն և բարկութիւնը դեռ չի յագեցան։ Այս թշուառ զոհերու մէջ կը գտնուէր նաեւ կարահաս անուամբ սպայի մի ծերունի հայրը. բնականապէս որդիական գութն և գորովը զարթուցին անոր մէջ վրէժինդրութեան ողին։ Թողուց շրտով կայսրուհետոյն ծառայութիւնը. փութաց յԱլբաս. անցաւ Պաւղիկեանց բանակին գլուխը. յարձակեցաւ Ամարասայ և Տփրիկայ կամ Տփրիկի բերդերուն վրայ, և ա-

1. Այս կուսակցութեանս զլուին էր Հարարդյն վահան, յորմէ յառաջ եկաւ և անունս կիննոխրիտք, այսինքն է չմաւացիք կամ չնակեացք, յուն. անան և չհրա կամ չհօրօս բառերէն ածանցեալ։

2. Առ Պետ. Սիկիյացւոց instabiles = Անհաստատք կը կոշուին, զդիտեմ ի՞նչ պատճառաւ։ Այս միայն յայտնի է, որ Սարգսի հետեղոք էին սպա։ Հայերէն ձնէ Հերձուածոց Գրգին մէջ Ալդիանոսը, — եթէ ըստ հնչման նոյն են և իրաք Յաստատուներու հետ, — զուտ ազգային տիպ ունին։ Անոնց համար կ'ըսուի, թէ Ասքա վարուք ըստ կաթողիկէ եկեղեցւոյ վարին. բայց 'ի վանս ուրեք ոչ բնակին։ Ոնին և կարդա ինչ 'ի ծածուկ զօշքարութեան, և ընդ մեզ ոչ աղօթեն։ Եւ պատուեն զօդս և ըզպտուզս։ և յորժամ 'ի մի վայր ժողովին 'ի խորհուրդա՛ զԱստուած ոչ յիշեն, այլ զհողմ և զտոհմականս. և դիւի ումեմն զոհ մատուցանեն Երան և Տոհմական կոյեցեալ անուն։ Եւ Զատիկ՝ ընդ Հրէայս կատարեն, և զամենայն բարերար իւրեանց՝ յանամոնց և 'ի գաղանաց պաշտեն։ Զեպիսկոսուանս և զբահանայս մեր բամբասեն վասն ընշասիրութեան ու

ռաւ զանոնք. յառաջելով՝ մոտաւ կայսրութեան երկիրները. կը րկին և կը կին ճակատներ տուաւ բազմախուռան դօրաց և գօրավարաց գէմ։ Այս անսակնկալ յաջողութիւններս տեսնելով ապա անոր աները խրիսովներէս, ինքն ալ յարձակեցաւ Եփեսոսի վերայ. մոտաւ Ս. Յովհաննէս եկեղեցին և ապականեց զայն։ Այն ատեն վասիլ կայսրը տագնապաւ՝ մեծագոյն բանակ մ"ալ հանեց անոր գիմաց, բայց նա միշտ յաղթական կը յառաջէր 'ի խորս կայսրութեան, Վտանգն ահագին էր երկուստեք. ճգնաժամն հասած էր: Վերջապէս յաղթուեցան Պաւղիկեանք, իրենց զօրավարն ալ սպաննուեցաւ։ Արդ՝ այս վճռական ճակատամարտէս վերջ դադրեցան Պաւղիկեանք քաղաքական կուսակցութիւն կազմելէ. մանաւանդ թէ նուաճեցան խսպառ, և պատմութիւնը լուց անոնց վերայ խօսելէն։ Սակայն յամին 969 Յովհ. Զմրշկիկ կայսրը՝ զիշանելով Անտիքայ Պատրիարքին թէոդորի խընդիրքին, փոխադրել առուաւ զանոնք 'ի Փիլիպպուպոլիս և 'ի Թրակիա։ Այս տեղերուս և ժամանակիս մէջ դադրեցնելով մենք ալ արևմտեան Պաւղիկեանց պատմութիւնը, տեսնենք, թէ յարևելք և մանաւանդ հայ հոգին վերայ Երբ և ի՞նչ վիճակ ունեցան և գործեցին անոնք։

Յովհ. Օճնեցի ուզելով խօսել Պաւղիկեանց մասին, ազօտ ծանօթիւն մ"ևս կուտայ անոնց ծագման վերայ 'ի Հայս. « Նախկին մծզնէութեան պայդակենութեան խնշերանք. որք խրատեալք և ոչ խմանացեալք, 'ի Ներսիսէ կաթողիկոսէ, զինի նորուն մահուանն խուսեալք չոքան զօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ, իւր 'ի նոսա հասուածեալք եկին յարեցան կշտամբեալքն 'ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք ումանք, զի սիրէ առ համանմանիսն իւր հասանել վրիպեան 'ի ծշմարտութենէն։ Եւ մինչև էր նոցա զօրավիրդն գտեալ զկարապետու Դերաքըրիստոսին, երկուցեալք և սարսեալք կային յուղիդ և 'ի գերապանձ կրօնիցն քրիստոսականաց... խակ յորժամ այսմիկ որպէս մեծագունի և ազօտացելոյ՝ հասանել կարծեցին, յայնժամ 'ի գարանամուռթենէն սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և 'ի ժողովրդաբանական համարձակեցան յարձակել տեղիս, 'ի հեղեղական հեղծուցիչ ջուրցն մասն հասեալ նմա, Ձրկայ անուանելով։ Ուրանոր 'ի միասին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք, որպէս անգեղք աշխարհաց 'ի նեխաշաղիդ ինչ գէշ. և զանուանն իւրեանց զաղտախինս յանդգնեցան կախել զայնցանէ, որ զերկնից բարութեանց բուռն հարեալ ունիցին յուսով։ »:

Արդ՝ իմաստասէր հայրապետիս այս խօսքերը թէե ճարտասանական և այլաբանական ձեռց տակ փոքր ինչ անորոշ մնացած

են, սակայն և այնպէս անոր մեզ աւանդած գլխաւոր կէտերն են Ա. թէ այն հինաւուրց մձղնէութեան և պայշակիենութեան, — այսինքն է Մանկէութեան, — խեշերանկը՝ որ է Պաւղիկեան աղանդաւորաց մնացորդը՝ Զ դարէն և այսր ծածկուած կը մնար հայ հողին վերայ, զոր յիշեցինք: Բ. թէ սոքա Ներսիսի Շինողի ժամանակ վերստին բազմացան և տարածուեցան 'ի Հայս: բայց մեծագործ հայրապետիս և որան յաջորդաց հոգածութեամբ և աղդու միջոցներով նուածեցան գէթ ժամանակ մի, և հեռանաւով ծածկուեցան մեր երկրի հեռաւոր և անծանօթ սահմանաց վերայ: Գ. թէ Աղուանից կաթողիկոսներէն հալածուած ուրիշ աղանդաւորներ ալ եկան և անոնց հետ միացան: Այն ատեն, ուրեմն, գորանալով անոնք՝ ելան իրենց որչերէն, սփուեցան Հայոց այլ և այլ կողմերն, և միամիսները մոլորեցներով՝ որսալ իրենց նանրահաւատութեան ցանցին մէջ: Դ. թէ անոնց կեդրոնատեղին էր Ջրկայ, ուր ամենէն աւելի համարձակ կերպով իրենց ամպարշտութիւնքը կը կատարէին:

Բայց թէ ուստի՞ և որո՞ց ձեռքով մուտք գտաւ Մանկեցւոց այս խեշերանքն 'ի Հայս, — Ներսիսի կաթողիկոսութեան ո՞ր տարին և ի՞նչ պարագայից մէջ, — թէ Շինող հայրապետն ի՞նչ միջոցներով կարաց նուածել զանոնք, — թէ յետոյ ինչպիսի՞ քաղաքական և բարոյական աղդեցութիւն ունեցան անոնք հայ ազգաբնակութեանց վրայ, — ի՞նչ կերպարանափոխութիւն կրեց այն աղանդն և Թոնրակեան անուանեցաւ, — հուսկ ապա թէ ի՞նչ վերջ ունեցաւ այս վերջինս և վերջնական հետեանքներ: արդ՝ այս կետերս ոչ միայն կարեռ են մեր եկեղեցական պատմութեան համար, այլ նոյն իսկ կարօտ քննութեան. և մենք պիտի ջանանք ըստ կարելոյն լուսաբանել զանոնք:

կանիսաւ խօսելով կալլինիկեայ որդւոյն Պօղոս Սամոսացւոյ և ուրիշ հայազգի Պօղոսի մի վրայ, անցողաբար մէջ բերինք հայերէն Հերձուածոց Գլքէն՝ Շէթի անունով պարսկադեն Մանկեցի կնկան մի 'ի Հայս գալուն և Այրարատ նահանդէն Պօղ անունով անձի մի զանիկայ առևանդելու միջադէպն, որով կը սուի, թէ « խառնակեցաւ աղանդն (Մանկեցւոց) ընդ քրիստոնէութիւն »: Արդ՝ մէջ բերուած տեղւոյն պարզապէս Հայոց աւանդութիւն և 'ի հարկէ եկամուտ ըլլան ակներև է. զի Եպիփանի քով չկայ յիշատակութիւնն անդամ՝ այն անձանց: Այժմ դիտելու ենք, որ այս աւածութիւնս բաւական կուտան մ'է կարծելու, թէ եօթներորդ դարուն Արաբիոյ կամ Թուրքաստանէն եկող Շէթիի և Պօղայ Այրարատեցւոյ ձեռքով մըտած ըլլայ նոր Մանկեցութիւնն 'ի Հայս: Արդ՝ այս պարա-

դայիս մէջ Փոտի արտայայտած երկրորդ կարծիքն՝ հայագգի Պօղոսի և Պաւղիկէութեան անուանակոչութեան մասին՝ ըստ ի-միք պատմականօրէն իսկ ստուգուած կը լինէր և ազգային աւան-դութեան հետ ձեռք ձեռքի տուած, եթէ հետեւեալ երկու հակա-ժամանակագրական անուանքն, այսինքն է Թրիքաց և սրբյն Եփրեմի⁽⁴⁾ մեզ խոշընդուն չելլէին. վասն զի հօն յիշատակուած Եփրեմի, — եթէ Ասորի Ս. Հայրն է, — Թուրք անուան հետ բոլորովին սնմիաբանելի կը մնայ, Ռւտսի ես չեմ վարանիր բնաւ՝ բոլորովին տարրեր անձնաւորութիւն մի համարել զնա. զի գրուածքիս հեղինակն այնպիսի հակաժամանակագրական խոշոր մխալ մ' ընելու չափ տղէտ չէր կարող լինել:

Իսկ գալով Թուրքը անուան կիրառութեանը, դիտելու ենք, որ է գարուն արգէն հաստատուած էին Թուրքաստանի մէջ, և յամի ջեառն 655 Արարացւոց հետ կոփիներ ևս ունեցան. ինչ-պէս խազարք ըսուած Թուրքերն ալ՝ Ը գարուն Խալիֆաներու հետ կը մրցէին՝ զՀայս իրարու ձեռքէն խլելու համար. Բ. Թրքաց՝ կատմամբ եղած գժուարութիւնը դեռ աւելի կը հար-թի, եթէ դիտենք որ վերսիշեալ տեղւոյ հեղինակին խօսքը Թրքաց մեծ արշաւանքին և Հայոց մեծաց տիրապետելուն վրայ չէ ուղղակի, այլ փոքրաթիւ խմբակաց կամ գաղթականներուն, որոնք Արարացւոց հետեւով թափեցան՝ ի Հայս. իսկ Արարա-ցիք յամին 652 արգէն տիրած էին Հայոց՝ Վասակ Պատրիկի ձեռքով: Ուրեմն այս կողմանէ իսկ անկարելիութիւն կամ հա-կասութիւն մի չենք տեսներ եղրակացնելու, թէ Շէթի անու-նով կնոջ միջոցով վերսին մոտած ըլլայ աղանդն նոր Մանիքե-ցւոց և արեպաշտութեան՝ ի Հայս՝ ի գարուն. և թէ յանուն Պօղայ Այրարատեցւոյ՝ Պաւղիկեան կամ Պօղիկեան անուա-նուած: Ահաւասիկ զոր՝ ի վեր անդր ազգային աւանդութիւն անուանեցինք, և մէջ կը բերէ Փոտ:

Դիտելու ենք որ բազմահմտան Հ. Մէկ. Զամիեանն (⁵) իսկ համաձայն Ճառընտրաց և Թղրոց գրքին՝ վերը նշանակած ժա-մանակամիջոցին, այսինքն է մօտ յամ ջեառն 655 կը գնէ Պաւ-ղիկեանց յայտնուիլն՝ ի Հայս:

Սակայն Պաւղիկեանց ինչպէս յայտնուիլն՝ այսպէս և տար-ծուիլը շուտով եղաւ. և այս բանիս շարժիչ պատճառներ կային:

1. Բնոյ եպիսկոպոսին Եփրեմայ ալ կրնայ պատշաճիլ յիշեալ միջադէպը. զի Գր. Մագիստրոսի առ Ասորւց կաթողիկոս զրած թղթին մէջ կը միշտի երբն դարձուցիչ մոլորելոց՝ ի Թօնրակեանց աղանդէն:

2. Պատմ. Հայոց Հտ. Բ,

Ա. Դիտելու հնք որ Յովհ. Մայրագոմեցին և իր աշակերտը Սարգիս, — որ մոլորութեան շաղին մէջ անցաւ անդր քանի զիւր վարդապետը, — յամի ծեառն 645 ծագած կրօնական և եկեղեցական տարածայնութեանց պատճառաւ՝ արդէն Պաւղիկեանց ցանելիք սերմերը բոււռցանելու համար հայ հողը պատրաստած էին (1): Այս տաղանդաւոր և հայրենասէր անձս, այս ինքն է Մայրագոմեցին, որ յառաջագոյն այնքան արդիւնաւոր հանդիսացած էր, — գէթ հակաքաղկեդոնեան կուսակցութեան առջև, — Հայաստանեայց եկեղեցւոյ առանձնաշնորհութիւնները պաշտպանելուն և Յունաց ոստնձգութեանց դէմ գնելուն համար, գժրադարձար չի մնաց այն սահմանին մէջ, այլ մղուեցաւ և մղեց զայլս 'ի ծայրայեղութիւն անդր: Սա իր աշակերտին Սարգսի հետ մէկ կողմանէ Յուլիանոսի Աղիկառնացւոյ մոլորական գրութիւնները թարգմանելով, իսկ միւս կողմէն ալ երկասիրելով զիւրատ վարք, զՀարատարմատ և զՆոյեմակ և տարածելով ամէն կողմ՝ պատճառ եղան երեւութեականաց և կարարուաց և ուրիշ հակաքը իստունէական աղանդոց, մանաւանդ թէ կամուրջ մի կապեցին անցնելու աստի 'ի Պաւղիկէութիւն անդր: Մայրագոմեցւոյ յիշեալ գրուածներէն երկրորդը միայն, այն է Արմատ հաւատոյ, կը գտնուի Էջմիածնի Զեռագրատան թիւ 1500. 4. քառածալ և նոորագիր գրչագրի մի մէջ, — ըստ վկայութեան Մայր ցուցակին (էջ 171): Սակայն ինչպէս միւս երկու գրութեանց, այսպէս և սորայս պարունակութիւնն ինձ յայտնի չէ: Բայց Թէոդորոսի Քութենաւորի՝ Ընդդէմ Մայրագոյն ցացոյ գրած ճառը՝ բաւական թանկագին տեղեկութիւններ կու տայ նոցա մասին, յորմէ յիշեալ տեղին միայն մէջ կը բերեմ, մնացածը յանձնելով 'ի կամն ուշիմ ընթերցողաց: « Քանզի ահա վերայասնեցան այժմ 'ի տանու թորգոմայ նորածին գառնութեան զարմք, օցողլք ճշմարտութեանն, որք կարարուք արտաքուստ երեխն գուարենին զգեստօք և խաչակիր մարմակրութեամբ, և ներկերպին գազանադէմք, խըրթագգեստք, խուճապողք, տգիտախողխողք, քծնարանք, գաղտապատիքք, գողտրաբարբառք, ապաժուժախորհք, գժապանք: Որք անսարսափելի մոօք և անձնահանձար իմաստիք ահա յառակնեալը յարաձգին առ բոլորից արարող և համագոյիցս փրրկող Բանն Աստուած. և 'ի բագէ տնօրինական կրիցն զմինն 'ի բաց կապտեն զակն հաշտոյն, որպէս զի զրոշորն ուրացին զիրկանակն զկիրառորինեն. կիսափրկումն մարդոյն առադրելով՝ մասնատքեամբ դաշտանիլ զիրկանակն Բանի զտնօրինա-

1. Տես կանոն ԼՅ, Յով. Կաթողիկոս, Վարդան և Կիրակոս:

կանուքիւն » : Այլ թէ ի՞նչ եղաւ այսպիսի ծայրայեղ ձկտման վերջնական արդիւնքն, և ո՞րքան զղջացին անոնց յարող կուռակցութիւնը՝ վերջէն պիտի տեսնեն ընթերցողք :

Բ. Ուրիշ զօրեղ պատճառ մ'ալ Հագարացւոց խուժանին և նոր վարդապետութեան՝ ի Հայս ներմուծած հակաքրիստոնէական վարքն ու բարքն համարելի է, իր ընդարձակ և հզօր ազգեցութիւններովը :

Արդ՝ այսպիսի նորանոր խլրտմանց և Պաւղիկեանց մոլորութեան առջևն առնելու համար է, կ'ըսուի⁽¹⁾, թէ Ն. Շինող կաթողիկոսն ստիպեցաւ եօթն և տասն եպիսկոպոսաց ժողովք մի գումարել, իր հայրապետութեան վեցերորդ տարին. այսինքն է յամի Տեառն 645: Սակայն այս ժողովքս աւելի թեմական եպիսկոպոսաց և իշխանաց մէջ ծագած իրաւասական և ամուսնական խնդրոց համար էր, ըստ իս, քանի թէ Պաւղիկեանց : Եւ ասոր յայտնի ապացոյց են այն ժողովէն որոշուած և Շինող հայրապետին և յիշեալ եպիսկոպոսաց ձեռնագրով կնքուած և վաւերացած ժբ կանոնները, ուր Պաւղիկեանց մասին՝ բնաւ խօսք չկայ : Այսուհետեւ քանի որ ողջ էր Հայոց նոր Լիւսանդրը՝ Թէոդորոս Որշտուանի, նա իր երկաթեայ ձեռքովը թոյլ չէր տար Պաւղիկեանց գլուխ ամրառնալ . թէ ինքն իսկ երբեմն գժտուած և գողացուցած էր իր ժամանակակից անընկճելի կաթողիկոսը : Բայց երբ յամի Տեառն 654 գնաց՝ ի ժամանակոս, և հօն մեռաւ . այնուհետեւ շուտով, այսինքն է 655ին, մէջ տեղ երան այն խաւարասէր և զազրագործ աղանդաւորքն՝ յեղծումն և ապականութիւն միամուց : Մայրագումեցւոյ աշակերտը՝ Սարգիս, որ արդէն իսկ ատելութեամբ լցուած էր կաթողիկոսին և եկեղեցւոյ դէմ, գլունաց յարեցաւ անոնց, որոնք իրեն պէս կարող և մոլեւանդն գլուխ մի չէին ունեցած դեռ : Մանաւանդ թէ խառնելով իրարու հետ Մանինեցւոց, Յուլիանիտաց, Ապողինարեանց, Մարկիոնեանց, Սարէլեանց և ժամանակակից դեռ ուրիշ աղանդներ, անոնցմէ նորահար աղանդ մի յառաջ բերաւ, զոր Յովհան պատմաբան կաթողիկոսը՝ « Զար և դառն հերձուած » կ'անուանէ . և մենք իրաւունք ունինք, — դէմ այս պարագայիս մէջ, — Փոտէն և Պետրոս Սիկիլիացիէն յիշուած հզօր աղանդապետին Սկրիոսի հետ նոյն համարելի :

1. Զամշեան Հ. Միքայէլ, Պատմ. Հայոց Հա. Բ. էջ 348.

Շարայարելի